

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՄՔ

Ամսոյս 6ին և 8ին դպրոցական երկու Հանդէսներ կատարուեցան ՚ի մխիթարութիւն Աւստաւորաց, Առաջինն էր յառանգաւորաց Արժարանի Հանդէսն, յորում զանազան նիւթոց վրայ զանազան ճառեր կարդացուեցան, Հայերէն, Գաղղլարէն, Տաճկերէն, և մի տրամաստասական աբարուած կատարուեցաւ ընդդէմ անտեղութեանց կրօնափոխութեան, ուր բաց ՚ի բաղմաստուսն Աւստաւորներէն և վանուցս Սիարանութեանէն, ներկայ էր նաեւ քաղաքիս Ասեմ. կառավարիչն իւր պաշտօնեաներով հանդերձ: Իսկ երկրորդն էր քաղաքիս Հայ Օրիորդաց Դպրոցի ձեռագործաց վիճակահանութեան Հանդէսն:

Չբկամերով մանրամասնաբար նրկարագրել յիշեալ դպրոցական Հանդէսներն և մեր կողմէն գովեստներ կարգաւարժանկը համարիմք կարդացուած ճառերէն առ այժմ գէթ մին հրատարակել, զոր խօսեցաւ յառանգաւորաց Արժարանի Իսաստու Ռարեշորհ Սարիաւագ Սելքոն Թըրակացի:

ԱՌԱՔԵԼ ԱՊԱՇՏՈՆ Ս. ՀԱՅՐ

ԵՒ ՄԵԾԱՐՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Մէն մի համախմբութիւն իւր յատուկ շարժաւիթն ու յատկանիշն ունի. ուստի բնական է որ մեր այս համախմբութիւնն եւս իւր յատուկ նպատակն ու նշանաբանն ունենայ: Մեծ նպատակ պէտք է ունենայ սոյն համախմբութիւնը մեզ նման փոթորկալից քամիներով ՚ի սփիւռս աշխար-

հի ցրուած ազգի համար: Այո, մեծ է սոյն համախմբութեան էական շարժաւիթն ու իսկական նպատակն, որ է աշխարհի ամեն կողմէն Վոլգոթա յի ոգեւորիչ սարաւանդին և Փրկչի կենսատու Վերեզմանին այցելու հայկազն ուստաւորներն ՚ի մի ժողովել և դասախարակութեան ու կրթութեան կարեւորութիւնը պարզել ա մենուսն համար: Հայութեան վտարանդի անդամներն սուրբ Սիօնի արտեւանաց վրայ գումարել և յօդաւորել ՚ի մի մարմին, մի սիրտ և մի հոգի, քրիստոնէական դաստիարակութեան հուրն ու ջերմութիւնն ա մենուսն մէջ արծարծել, մտաւոր կրթութութեան կենդանորար աշխոյժն ու եռանդն բացալիս ել, մահահրաւէր թմրութեանէ ՚ի զգաստութիւն հրաւիրել, վերջապէս ծնողական անհրաժեշտ սրբատուց կատարումն քարտէլ հալածումն տգիտութեան և տարապայման կարեւորութիւն ազգային դպրոցաց. ահա այս է գլխաւոր նպատակ ներկայ հանդիսիս:

Պէտք է որ վարժարանիս հանդիսազիր սանուներ Չեզ ծնողացդ՝ հարց և մարց պարտակատարութեան յուշարարներ լինին. պէտք է որ նոցաներկայութիւնը ձեր մէջ ծնողական պարտուց բարի զգացումը զարթուցանէ, նոր ու զորաւոր թռիչք մը տայ անոր և մղէ ՚ի գործունէութիւնս:

Ծնողական պարտք ըսինք, սակայն ի՞նչ կը նշանակէ ծնող բառը, եթէ ոչ իւր բովանդակ նշանակութեամբ առնելով, անձնաւորութիւն ընտանեաց, որ արտադրիչ է անհատից, ձուլիչ մասնաւորաց, որոնք ընդհանուր մարդկութիւնը կը կազմեն. զի անհատներէն կը կազմակերպին ընկերութիւնք, ընկերութիւններէն՝ ազգութիւնք, եւ ազգութիւններէն

Թագաւորութիւնք, որովհետեւ մարդըն է որ զմարդկու թիւնն կ'արտադրէ, և ընտանիքներն են մարդկային ընկերականութեան խարխիսն ու հաստարանը:

Արդ՝ ընտանիքներն են սերուն հիմունք ընկերականութեանց, ազգութեանց և թագաւորութեանց. քանզի վերցուր ազգութիւնքն, և ահա՛ կ'անհետին թագաւորութիւնք, վերցուր ընկերութիւնքն, զոչ ընդ նմին կը լուծուին ազգութիւնք. և վերջապէս վերցուր ընտանիքներն, և ահա՛ նոյնհետայն 'ի չիք կը դառնայ ընդհանուր մարդկութիւնը:

Աստի կրնանք հետեւցնել թէ՛ ծնողքներն խիստ մեծ պարտաւորութեանց են թակաց են, և կարող ենք համարձակութեամբ ըսել թէ՛ նոցա պարտաւորութենէն մեծ պարտաւորութիւն չըկայ աշխարհիս վրայ: Աւրեմն, ծնողքներ, ճանաչեցէք Ձեր բարձր կոչումն ու մեծ պարտաւորութիւնքն. քանզի ինչպէս տեսաք. ընկերականութիւնք և ազգութիւնք 'ի ձեզ կան հիմնեալ, համայն բարոյական աշխարհի կանգնումն ու գլորումն ձեր պարտաւորութեանց անթերի կամ թերի կատարումէն, և ձեր բարձր կոչման ու անտեսութեան լաւ կամ յուրի կիրառութենէն կախումն ունի: Ա՛րջապէս պէտք է գիտնաք որ բովանդակ բարոյական աշխարհի վերակենդանութեան վառարանը, յենարանակէտը ընտանիքն է, դուք էք. եթէ բարձրանայ յենարանակէտը, կը բարձրանայ ընդ նմին համայն մարդկութիւնը, իմանալի լուսոյն կը մերձենայ, կ'երջանկանայ և կը հոգիանայ:

Իսկ ընդ հակառակը, եթէ փոխանակ բարձրանալու՝ հանապաղ խոնարհի, այն ատեն բովանդակ մարդկու

թիւնը ցաւոյ ու վշտոց մէջ կը հեծէ, դժստոց կը մերձենայ, կը նիւթանայ և խոլառ կը մահանայ:

Արքիմեթէս նիւթական աշխարհը տեղափոխելու համար մարդկութենէն յենարանակէտ մի և եթ խնդրեց, բայց իւր խնդիրն անկատար մընայ: Սակայն Աստուած, որ ամենակարողն է, ձեզ տուաւ աննախանձաբար բարոյական աշխարհի յենարանակէտը, որ է մարդկային մտաց կրթութիւնն ու սրտի դաստիարակութիւնըն, որպէս զի նովաւ կարող լինիք մարդկային ազգը մինչ 'ի երկինք բարձրացնել, և ընդ Աստուծոյ միացնել, որ մարդկութեան միակ նպատակակէտն է:

Իարեպաշտ ծնողքներ, պէտք է խոր ըմբռնէք, որ դուք մարդկային ընկերականութեան ձուլիչներն էք, և որ աւելին է, դուք երկրաւոր նախախնամութիւններ էք, դուք գործակից էք վերին Աստիանամութեան:

Ահարժեշտ հարկ կայ ուրեմն ձեր վրայ, որ ապագայ սերունդը աստուածագիծ ուղւոյն մէջ ընթացնէք, նորա հոգին դէպ 'ի միակ ճշմարտութիւնն՝ առ Աստուած կարապետէք: Մանաւանդ դուք, բարեպաշտ մայրեր, պէտք է որ ձեր կաթին հետ Աւետարանի կենսատիթ պատուէրներն և անմահարար ճշմարտութիւններն ջամբէք ձեր որդւոյ և նոցա սրտին մէջ անջինջ դրոշմէք Աստուծոյ սուրբ կամբը. պէտք է որ նոցա հոգւոյն խորը այն բարոյական ոյժը զարթուցանէք, այն կենսանորոգ սկզբունքներն անեղձ քանդակէք, որով միայն կարող կը լինի մարդ ճշմարտապէս անարիւ աշխարհիս վրայ. քանզի դուք էք նոցա դայեակը, նոցա անմեկին կենսակիցը մինչ 'ի նոցա պատանեկութիւն թեւակոխելն:

Երբ մանուկն յաշխարհ կուգայ, ա-
մենէն առաջ ձեր գուրգուրացող բա-
ղուկներն իւր ապիկարութեան օգնե-
լու պատրաստ կը գանայ: Առաջին
անգամ նորա տկարութիւնը դարմա-
նելու համար իրեն հպող ձեռքերն՝
ձերն են: Այն ձեր ձեռաց շօշափու-
մքն է, որ կըզգայ նա զոչք ընդ լու-
սոյ: Գուրգ էր որ նորա ճիշն ու աղա-
զակը կը լուեցնէք, նորա հանգստու-
թեան համար ձեր քունն ու հանգըս-
տութիւնն անձնուիրաբար կը զոհէք
առանց սրտնեղութեան, և ձեր կա-
թին ջամբամբն ու դիեցմամբ զայն
կը տածէք և կը զարգայնէք: Բայց
այս ամենը մայրական գորովոյ խան-
դաղատանաց արգասիքն է միայն, որ
գրեթէ ամենկենդանեաց հասարակէ:

Սակայն, բարեպաշտ մայրեր,
գուրգ պէտք չէ որ այսչափով բաւա-
կանանաք, զի ասով ձեր սրտորբը կա-
տարած չէք լինիր: Չէր առաջին
պարտքն է մարմնոյն հետ հօդին ալ
պարտել, քանզի ձեր տնտեսութեան
և ինամոց յանձնուած արարածները
լոկ շնչաւոր չեն, այլ հոգեւոր: Մի-
ակողմանի աճուամբ մահ կ'ենթադրէ,
վասն զի ինչպէս որ միաթեւ թռչունն
անկարող կը լինի թռչիլ, նոյնպէս
նաեւ մարդն անկարելի է որ լոկ մար-
մնաւոր զարգացմամբ կարող լինի դէմ
եղեալ նպատակակիտին հասնել, որ
է Աստուածանմանութիւն: Գուրգ
պէտք է որ երախայի սուրբ բերնին
մէջ ամեն բանէ առաջ գերագոյն Ա-
լին սուրբ անունը գնէք, և կրթէք
նորա դիւրաթեք լեզուն, որ առա-
ջին անգամ իւր Արարչին անունն՝
Աստուած թօթովէ եւ արտաբերէ
սրբութեան և անմեղութեան զգա-
ցումներով:

Բարեպաշտ ծնողքներ, գուրգ որ
յատուածուտ կարգեալ մարդկա-

յին ապագայ սերնդոց տնտեսն ու
դատարարին էք, յերկիւղ Տեառն սը-
նուցէք զանոնք, քանզի սկիզբն ի-
մաստութեան երկիւղ Տեառն է, և
ջանացէք աստուածապաշտութեամբ,
հեղութեամբ և ամեն առաքինու-
թեամբ օժտել ու բարգաւաճել կեն-
դանի օրինակ տալով նոցա ձեր անա-
բատ վարքն ու կեանքը: Վասն զի
երբ երախան աչքը բանայ, իւր տե-
սութեան առաջին անգամ ենթարկ-
ւող իրերը չորս սպտ և նորա մէջ
գտնուած աւարկաններն են, ահա այդ
սահմանափակ և հունաւոր վայրն է
մարդկութեան բովը, այս անողորտ
աշխարհիս մէջ այդ փոքրիկ սենեակն
է երախային աշխարհը: Աս իւր պա-
լատին, այն է, որրանին բարձուն-
քէն՝ սուր ու հետաքնին ակամբ իւր
ծնողաց իւրաքանչիւր վարմունքը, մէն
մի շարժմունքն ու հանգամանքը ման-
րազնին կերպիւ կը դիտէ, և զանոնք
այնպէս կը տպաւորէ իւր սրտին խո-
րը, որ այլ եւս չըսեմ անկարելի, այլ
խիստ դժուարին է ջնջել:

Ինչպէս որ և իցէ հայելի ենթա-
կայ է իրեն ներկայացուած մարմին-
ներուն ճիշդ գծագիրը՝ լուսոյ անդ-
բաղարձմամբ իւր մէջ կերպաւորե-
լու, եթէ չեմ սխալիր, նոյնպէս ալ որ
և իցէ երախայ ընդունակ է զգայա-
բանաց միջնորդութեամբ իւր սրտին
խորը ճիշդ ու անջինջ քանդակել նո-
րա տեսութեան ներկայացուած կե-
նաց և շարժմանց մէն մի փոփոխմուն-
քն ու հանգամանքը և վարուց ճիշդ
ընդօրինակութիւնը: Միով բանիւ
նորա սիրտը բարեբեղուն դաշտի մը
նմանութիւնն ունի, յորում ինչ որ
զգայարանաց միջոցաւ սերմանու ինչոյ-
նը կը բեղմնաւորէ, և կը ստղաբե-
րէ: Ասոր ճշմարտութիւնը Ախուս
իւր անտուտ բանիւ կը հաստատէ:

“Օր ինչ սերմանէ որ՝ զնոյն և հնձէ”
եթէ բարի և եթէ չար : Սէ՛ծ յիմա
բուծիւն է ուրեմն վարսակ ցանել ,
և ցորեան սպասել :

Օր ըստ օրէ կ’աճի երախան և կը
զարգանայ , բայց կ’աճին նորա հա-
սակին հետ իւր սրտին մէջ ցանուած
սերմունքն ալ , և տակաւ առ տակաւ
կը ծաղկին և կը պողաբերին , ուս-
տի կը մակաբերուի նորա դաստիա-
րակին վարուց ու բարուց որակու-
թիւնը :

Արեմն , ծնողքներ , մի տրտնջաբ
երբէք ձեր սրդւոց անառակութեան
վրայ , այլ տրտնջացէք ձեր վրայ , որ
նոցա բարի օրինակ չեղաք . ծեծեցէք
ձեր կուրծքը , որ հոգի մը սպանեցիք ,
յաւիտենապէս կորուսիք զայն : Ան-
մխիթար լացէք , որ աշխարհս աղե-
տաբեր բեռով մը ծանրաբեռնեցիք ,
ընկերականութեան փոխանակ վարդ
մի ընծայելու , փուշ և տատասկ մա-
տուցիք . փոխանակ մարդկութեան
գեղթափ ընձեռելու , բարոյականու-
թեան ժանտախտ պողաբերեցիք :

Պետք է քաջ գիտնաք , որ ծնողա-
կան պարտաւորութեանց առաջինն է
բարի օրինակ լինիլ իւրեանց սրդւոց ,
հեղինակ լինել նոցա առաքինութեան ,
քանզի ոչ որ կարող է մանկանց լա-
ւադոյն աւանդել բարուց ուսումը
քան զայն որ նորա սննդարարն է :
Վարդուս առաքինութեան առաջին
վարժապետն իւր ծնողքն է , վասն զի
բանաւոր էակ մը իւր բովանդակ կե-
նաց մէջ կատարելու գործողութիւն
ներն ընտանեաց մէջէն կը սկսի , և
որոյ առաքինութեան առաջին աւ-
պարէզն իւր հայրենի տունն է : “Նո-
ցա սրտին խորը կը տպաւորի առա-
քինութիւնը , երբ նորա ջերմ կնիքը
ծնողական սէրն է , կ’ըսէ Թեաւարոս ,
և թէ նորա աւելի բարի օրինակով

կը կրթուին քան թէ բարի խրատուք .
որովհետեւ առարկաներն աւելի ա-
չաց կ’ազդեն՝ քան թէ ականջաց : Սկ
խրատները թռուցիկներ են , որոնք
աշխարհիս վրայ հիմունք չունին , այլ
յողդողդ մթնոլորտին մէջ կը ծփան ու-
կը ծածանին : Իսկ ընդ հակառակը՝
վարուց օրինակը ապառաժի վրայ հիմ-
նեալ շէնք մ’ է : Սչ մի պատուէր ,
ոչ մի ուսումն , ոչ մի օրէնք այնպէս չեն
տպաւորի , ինչպէս ծնողական օրի-
նակը : Անոնք որ գործքով կ’աւան-
դուին՝ աչքով կըսորվուին և սրտին
մէջ կը գրուին : Ս’ի բնական օրէնք
է այս ” :

Արեմն , բարեպաշտ ծնողք , ձե-
րերէն աւելի ձեր սրդիներէն պատկա-
ռեցէք . խորշեցէք նոցա տոջեւ ուխ-
տադրուժ և երդմնազանց լինելէ ,
սուտ խօսելէ , վասն զի ստուծեան
հայրը սատանան է . երկիւղ զգացէք
այդ անմեղ հոգիները ճշմարտու-
թեան շաւղէն զակատելու վատ սո-
վորութենէն , Սէկ խօսքով զգուշա-
ցէք զանոնք դայթակղեցնելէ , զի այս
խսկ է Աւետարանի պատուէրն . “Սվ
որ այս մանուկներէն մին իմ անուամբ
կ’ընդունի , կ’ըսէ Եիսուս , զիս կ’ըն-
դունի , և ով որ զիս կ’ընդունի , իմ
առաքիչը կ’ընդունի . իսկ ընդ հակա-
ռակն , ով որ ինձ հաւատացող այս
փոքրիկներէն մին դայթակղեցնէ , ա-
ւելի լաւ է որ այնպիսի մարդուն վը-
զէն քար կախուէր , և ծովը ձգուէր ,
դերեզմանի անգամ չարժանանարով ” :

Արդ ուրեմն , բարեպաշտ ծնողք ,
զգուշանալ պարտիք , որ դայթակղու-
թեան առիթ չը լինիք ձեր սրդւոց
թէ անվայել վարքով և թէ խօսքով .
այլ ջանացէք սր գեղեցիկ վարքով ու
բարի օրինակով նոցա փրկութեան
պատճառ լինիք , զի այս իսկ է ձեր
պարտն և միանգամայն փառք :

Չեր դատարարական թեան շէնքը
 Աւետարանի հիման վրայ հաստատու-
 ցէք . վասն զի աւետարանական ճրչ
 մարտութեան և գեղեցիկ բարոյա-
 կանի վրայ հիմնեալ ուսու մն ու կեան-
 քը միայն կը մարթի լուսու սրել մեր
 սիրտն ու հոգին և մտիթարել մեր
 սիրտը ճշմարիտ մտիթարութեամբ :
 Աւսուցէք նոցա ձեր կենաց կենդանի
 օրինակաւ , որ ճշմարտութեան հա-
 մար մեռնիլն կեանք է , և թէ՛ ճշմա-
 րիտ գեղեցիկութիւնն 'ի համեստու-
 թեան կը կայանայ , և ոչ 'ի պշտանս :
 Աւսուցէք նոցա որ աշխարհային ըս-
 տու երատիսյ մեծութեան ու բարձ-
 րութեան չը ձգտին տենչանօք . զի
 ճշմարիտ մեծութիւնն ու բարձրու-
 թիւնն աստուածային սիրոյ մէջ կը
 բովանդակի . « Քանզի մեծ է սէրն
 Աստուծոյ քան զամենայն մեծութիւն
 երկրաւ որ » . Աւսուցէք նոցա , որ ա-
 մեն բանէն աւելի քրիստոնէական Ա-
 կեղեցին սիրեն , խղճի աղատութիւնն
 պաշտեն և Աստուծոյ օրինաց հպա-
 տակին :

Աւսուցէք նոցա որ բոլոր մարդ-
 կային ազգը աշխարհիս վրայ սրբ-
 ուած մեծ ընտանիք մ' է , բոլոր
 ժողովուրդք՝ եղբայր են , և կը պարաա-
 ւորին զիրար սիրել . զիրար սիրելն՝ ի-
 րարու անձնուէր լինիլ կեննթագրէ ,
 և անձնուիրութեան հեղինակը նոյն
 ինքն Քրիստոս է , որ մեռաւ մեզ հա-
 մար , որպէս զի իւր մահուամբ մարդ-
 կային մեռեալ ազգը կենդանացնէ :
 Անձնուիրութիւնը զմեզ երկնաքա-
 ղաբացի կ'ընէ , զի չեմք յաշխարհէ
 աստի :

Աւսուցէք նոցա որ անմահ սիրով
 սիրեն և անարատ պահպանեն իւր-
 եանց կրօնքն ու հաւատքը , քանզի
 նա է որ մեր քայլերը առ Տէր կ'ուղ-
 ղէ , և մարդոյն այս բազմարկած աշ-

խարհիս մէջէն առաջնորդելով՝ ան-
 սարթաք իւր նորատակակիտին կրհաս-
 ցընէ , որ է միանալ ընդ Աստուծոյ :
 Աւսուցէք որ ճշմարտութեան լայր
 սիրեն , որպէս զի լուսոյ և տունջեան
 սրդիք լինին , և թէ պաշտեն զԱս-
 տուած 'ի բոլոր սրտէ և 'ի բովան-
 դակ մտաց , և երկրպագեն նմա՝ հո-
 գւով և ճշմարտութեամբ , զի Աս-
 տուծոյ կամքն է հոգւով պաշտուիլ
 և ոչ շրթամբք միայն . քանզի ինքն
 իսկ հոգի է և ճշմարտութիւն :

Յիսուսի Աւետարանը , որ գեղե-
 ցիկ դատարարական և բարոյա-
 կան վերակենդանութեան սկզբանց
 շտեմարանն է , բացէք մանկանց առ-
 ջեւ , և 'ի լուր նոցա կարդացէք , ե-
 թէ ուսուցած չէք տակաւին նոցա
 կարդար և դեռահաս մանկանց թարմ
 ու խոսրան սիրտը կենսածիր ճշմար-
 տութիւններով սնուցէք , և կանխե-
 ցէք նոցա սրտին ու խղճին մէջ մու-
 ծանել քրիստոնէական կրօնքը , որ կե-
 նաց կրօնքն է , և աւետարանական
 սարաուց բովանդակութիւնը , քանի
 որ նոցա սիրտն ու խիղճը տակաւին
 սնապաշտութեան , ունայնասիրու-
 թեան և աշխարհային կորստաբեր կը-
 րից կարծր կեղեւով չըջապատուած
 չեն , ապա թէ ոչ խիստ դժուարին
 կը լինի 'ի վերջոյ նոցա սիրտն ու միտ-
 քը բարոյսապէս մշակել և ներքին ու
 արտաքին մարդիկն իրարու հետ դաշ-
 նաւորել :

Չանոնք Յիսուսի արիւնամած
 խաչին պատուանդանը տարէք , պատ-
 մեցէք նոցա այդ անմահ գառին զեն-
 ման սրտագրաւ և սքանչելի խոր-
 հուրդը , զգացուցէք նոցա Յիսուսի
 անբաւ սէրը , որով 'ի գութ շարժե-
 ցաւ մեր ողբալի կացութեան վրայ ,
 և երկնից բարձրութենէն մինչ 'ի եր-
 կիր խոնարհեցաւ , և իրենց նման

մանկանարով՝ ՚ի խանձարուր պատե-
ցաւ, որպէս զի մարդկային ազգը
մեզայ դժնդակ գերութենէն աղա-
տէ և սրտով բեկեալները մխիթարէ,
և թէ սիրեց զիրենք իւր որրանէն
սկսեալ մինչ ՚ի գերեզման տնպա-
սում սիրով: Ասով զարթուցէք նոցա
սրտին մէջ առ Հիսուս այն մեծ ե-
րախտադիտական անկեղծ ու մարուր
զգացումը, զոր մեզմէն կը պահանջէ
Աստուած: Օրհնութեանցէք նոցա,
իրենց առ Աստուած, առ անձն, առ
ընկերն, այսինքն՝ առ համօրէն մարդ-
կութիւնն ունեցած պարտաւորու-
թիւնն և պատուիրանազանցութեան
մահաբեր հետեւանքն: Տուէք նոցա
ձեռքը՝ այն աստուածային մատեանը,
հին և նոր ուխտի կտակարաններն, ու
րոնք համայն մարդկութեան համար
գրուած են, ինչպէս ծերոց, նոյնպէս
երիտասարդաց և մանկանց համար:

Թող բռնեն նորա իւրեանց ան-
զօր ու փախուկ ձեռքերով այդ յան-
մահութիւն աւաջնորդող Աստուա-
ծաշունչ գրեանքը, թող կարգան նա-
քա իւրեանց դիւրաթեք լեզուա-
յոյ աստուածագիծ յայտնութիւնքը,
և թող առատ նիւթ քաղեն իրենց
կոչման վեճմութեան և մարդկային
հոգւոյ անմահութեան վերայ, և ու-
սանին որ իրենք Աստուծոյ պատկերն
են, նորա կենդանի տաճարներն և
միանգամայն որդիներն են: Թող ու-
սանին նաև որ հարազատ որդին պար-
տական է յանձն տպաւորել իւր հօր
մէն մի կատարելութիւնքն և իրբեւ
՚ի հայելու նորանմանութիւնն յան-
ձին բերել:

Բայց հոս նոր խնդիր մը կ'ըլլայ
մեր առջեւ, կնձապից խնդիր: Անք
ըսինք թէ ծնողք պարտաւոր են իւ-
րենց մանկանց Աւետարանի ուսուցմն

ուսուցանել: Բայց միթէ կարելի է
առանց ուսանելու ուսուցանել, ա-
ռանց կարդալ գիտնալու կարդացը-
նել: Անկարելի է այս ինչպէս ուրեմն,
բարեպաշտ ծնողք, ձեր դաստիարա-
կութեան հիմն Աւետարանի անդրը-
դուելի անկիւնաքարին վերայ պիտի
դնէք, մինչդեռ ձեզմէն մեծ մասն
ոչ զայն կարդացած է և ոչ իսկ նա-
րա շինողական սիրջանց ծանօթացած:

Այս կը տարակուսիմ, որ իմ այս
խօսքերս իսկ ձեր շատերուն համար
օգահնչիւն անհասկանալի բառեր են
կան, կան ձեր մէջ շատեր, որոնք իւ-
րեանց մայրենի լեզուն իտպառ մտա-
ցած՝ այլաբարբառ լինելն նախապա-
տիւ կը համարին, որով իւրեանց հա-
րազատութիւնը կորուստն և ըստ ա-
մենայնի խորթացած են: Արջանի ցա-
ւալի ընթացք:

Անծարոյ հանդիսականք, մեր նախ-
նեաց այնքան փառքերէն ու ճոխու-
թիւններէն մեր ազգութիւնը պահ-
պանելու համար միմիայն կրօնքնիս և
մայրենի լեզունիս բաժին մնացած են
մեզ, որ մեր ազգութեան տարեքն
ու էական մասունքն են: Պէտք է որ
ասոնք ալ մուտցուցանեն բաւղին
խորը թաղիք, միթէ վայելէ մեզ,
որ եղբայր լինինք և իրարու լեզու-
չըհասկնանք, Հայ լինինք և ՚ի նա-
խատինս հայութեան հայերէն չըգիտ-
նանք: Այնչապ ներկայ վիճակը մեր
ազգութեան նկատմամբ այնչափ ծան-
րակշիռ, այնչափ սպառնալից է որ ազ-
գասէր ոգին կը նուազի երբ նորա ա-
ղետալի հետեւանաց վրայ կը մտածէ.
մեր այս տարտամ ու տխուր վիճակը
մահ կը սպառնայ մեր ազգութեան,
եթէ երկար շարունակուի:

Աւաբերինք, մեծարոյ հանդիսա-
կանք, ուշաբերինք և մեր ոտից առ-
ջեւ գտնուած անձողապրելի բարի-

րին թոսը տեսնենք, կորովի աչքով տեսնենք, որ նորա սահուն եզրին վերայ կը գտնուինք, և մի քայլ եւս բաւական է մեր անկանգնելի գլորման պատճառ լինիլ :

Սեզ իրար կասող և մի ազգ կազմող երկու յօդ միայն մնացած են մեզ՝ կրօնք և մայրենի լեզու : Սեր բնիկ աշխարհը, մեր դիւցազունն ու արիւ ասիրտ նախնեաց խանձարուրն ու սրբանն եղող փառահէղ Հայաստանը՝ այժմ տխուր աւերակաց սրտաճմլիկ և մորմոքեցուցիչ տեսարան մը կը ներկայացնէ հայրենասէր աչաց : Սեր այն ճոխ թագն ու գաւազանը, մեր աշխարհաստան թագաւորութիւնը չը կան մեզ համար, ՚ի հող տապանի կը ննջեն մեր արի զինուորներն, որոնք իրենց արեամբ մեր հայրենի երկիրն արտաքին թշնամեաց դէմ պաշտպանեցին, կործանած են մեր արքայական շքեղ պալատներն, փոշի են դարձեր մեր թագաւորական աթոռներն, չը կան մեզ՝ արտալած որդւոցս համար, մեր այնքան փառքերէն և ոչ ինչ. մնացած են մեզ միայն կրօնք և մայրենի լեզու : Ահա մեր ներկայ ճոխութիւնն ու հարստութիւնն :

Աւ ինչ պիտի լինի մեր վախճանըն, եթէ այս երկու հայրենի մեծ աւանդներն եւս առ ոչինչ համարեմք և կորուսանեմք :

Արք անխաբ խղճիւ և անաչառ քննութեամբ մեր սոյն վտանգաւոր վիճակը հետազօտենք, արմատն կը գտնենք տգիտութեան մէջ և յաւէտ ընտանեաց մէջ, այսինքն հարց և մարց անդաստիարակութեան և անկրթութեան մէջ, նոցա պարտուց և իրաւանց անգիտակցութեան մէջ : Այս պէտք է խոստովանիլ, որ այս ամեն աղէտից աւաղին պատճառը գլխաւորաբար մարց անուսումնութիւնն ու անգիտակցութիւնն է :

Ինչպէս խաւարը՝ լուսոյ պակասութիւնն է և տգիտութիւնն՝ գիտութեան, նոյնպէս ևս այս ամեն վշտալի չարեաց իսկական պատճառը՝ ընտանեաց դաստիարակութեան ու կրթութեան պակասութիւնն է. վասն զի երբ ընտանիքներն, որ մարդկութեան խանձարուրներն են, լստուծոյ իմաստութենէն և երկիւղէն թափուր և պարտուց ու իրաւանց գիտակցութենէն ու կիրառութենէն զուրկ լինին, երբ Վեւտարանի վերածնելութեան լուսէն հեռացած և իրենց դաստիարակութեան յանձնըւած անմեղ էակաց միտքն ու սիրտը ըստ արժանեոյն մշակած չը լինին, ահա այն ատեն բովանդակ մարդկութիւնը թանձր խաւարով կը ծածկուի, նորա միտքը աշխարհային նսեմ ամպով կը չը ջապատի, սիրտը կը մեղկանայ, հոգին կը լքանի, որով կը ջատի և անձնատուր կը լինի կրից և ամեն չարիք երկնող անձնասիրութեան և ծայրայեղ փառասիրութեան դժոխային կռոց առջեւ անպատկառ կը ծընրադրէ :

Արդարեւ խիստ տխուր է մեր ազգի վիճակն կանանց կրթութեան և յառաջադիմութեան նկատմամբ : Ինչոք եթէ հայ անուամբ կը պարծիմք, պէտք է որ նոցա համակերպինք, նոցա գործը գործենք, նոքա գիտէին կարդալ և գրել. նոքա հաւածանաց դարերու մէջ աղօթելով կը սնանէին, մարգարէից ընթերցմամբ կ'աճէին եւ Վեւտարանով կ'ապրէին, Սեցէք թէ փափկախոս Աղիւշէն ինչ կ'ըսէ նախնի հայ կանանց և մարց նկատմամբ. « Սաղմոսք էին, կըսէ, մշտնջենաւոր՝ մրմունջք ՚ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեայք՝ ընթերցուածք մարգարէիցն » :

Աւրեմն, մեծարոյ հանդիսականք,
մեր այս տխուր վիճակին վերջ մը տա-
լու համար դպրոցներ պէտք են մեզ-
հարկ անհրաժեշտ է, որ ամեն ուրեք
երկսեռ դպրոցներ ունենանք, և պէտք
է որ անոնց մէջ առաջին տեղը գրա-
ւեն Աւետարանի փրկարար ուսմուն-
քն և մեր մայրենի լեզուն: Պանանք
ուրեմն ըստ արժանւոյն տպագայ հայ-
րեր ու մայրեր պատրաստել մեզ,
բարոյական և մտաւորական զարգաց-
մամբ մեր նոր սերունդն զարգացնել
և զօրացնել:

Այս կը համարիմ միակ միջոց ազ-
գային փրկութեան և յառաջագի-
մութեան, և ահա այսու կը կնքեմ
խօսքս:

Սէլուն Ս. Յակոբեան
Թրակիի:

Հետեւեալ քաջալերական յորդո-
րն, զոր 'ի դիմաց Ախտաւորաց ուղ-
ղած է առ յառանգաւոր աշակերտս
Արժանապատիւ Սեարոպ վարդապե-
տն Սօկացեան, միաբան Ս. Ախտին
Վարագայ, արժան կը համարիմք հրա-
տարակել իբրեւ յայտնի նշան իւր
յառաջագիմասէր ոգւոյն և զգայուն
սրտին:

Սբոյ Յակոբեան յառանգաւոր Վարդի-
աշակերտէլոյ Սարիւ 6ի ներխայտոցած շեղ
հանդիսին փոստարձ շնորհակալութիւն:

Ազնիւ մանկունք, ինչպէս դուք
զգայուն կերպով հանդիսացայք տե-
րունական ուխտաւորաց, հետեւաբար
և ձեր ծնողաց առաջ, ձեր յառաջա-
դիմութեան քաջնթաց քայլերը կը
պարտաւորեն զիս փոխադարձաբար
շնորհակալութեամբ ուրախակցու-
թիւնս յայտնել, ձեր վսեմ հանդի-
սին ներկայ եղող այնչափ բազմամբոս
ժողովրդեան կողմէն իբրեւ թարգ-

ման պիտի խօսիմ ձեր հետ, ուստի
կը լնդրեմ որ ընդունիք:

Աշխարհիս ասպարիզին մէջ ա-
ռաջին տեղն բռնած էք, դուք ճշմա-
րիտ երջանկութեան առաջին ժառան-
գորդներն էք, դուք ձեր մատաղ հա-
սակին մէջ դպրոցականութեան վի-
ճակեցայք, որոյ դատարակութեան
արգանդէն բարուք մարդ պիտի ծը-
նանիք, գիտէք ինչ կոչում կոչուած
էք, կոչում մը՝ որուն աշխարհս չար-
ժէր: Իւրաքանչիւր անձը կրնայ միտ
բերել իւր տղայութեան հասակէն 'ի
վեր մինչեւ ցարդ եղած աշխարհիս
կենցաղավարութեան դիւրափոփոխ
ընթացքն, որուն մէջ ճշգրիտ կը տես-
նուի միանգամայն և մարդն խաղա-
լիկ եղած աշխարհի անվըտահելի եր-
ջանկութեանը հետ, բայց դպրոցի կո-
չումն այնպէս չէ. մինչդեռ աշխար-
հի փառաց երջանկութիւնք՝ միայն
խաբուած աչքերը կը շլացնեն, բայց
դպրոց, որ ուսման ասպարէզն է, սիրտ
և միտք կը հարստացնէ, այնպէս վըս-
տահութեամբ՝ որ աշխարհի ձախորդ-
դէպքերը մէկ տեղ գալով չը պիտի
կրնան կողոպտել: Ինչ երջանիկ է այն
մարդն՝ որ բնաւ իւր ունեցած հա-
րստութեանց կողոպտուելէն վախ
մը չունենար. վաճառականաց նաւե-
րը կ'ընկղմին, մեծածախք չէնքերը
կ'այրին ու կը փլչին, հօր մը զաւակ
ները կը մեռնին, ծերունին անմխի-
թար կը մնայ, մարդկանց առողջու-
թիւնք կը խանգարուին, որով ամեն
երջանկութիւնք կը խախտին. աշխար-
հիս զանազան տեսակ ձախորդու-
թիւններն զմարդիկ կ'աղքատացնեն, ո-
րով այս աւուր ուրախ վաղն տրտում
կը դառնայ և այն, բայց ձեզ բաժին ին-
կած դատարակութիւնք և ուսմուն-
քը ոչ ոք չը կրնար ձեզմէ հանել: Թող
աշխարհն իւր խաղալիքներն խաղայ, որ

արդէն իւր բնաւորութիւնն է, բայց քաջ գիտցէր որ ձեզմէ բան մը չըզլտի կրնայ կորզել. թող Վղէքսանդր աշխարհակալէ, թող Աէնկթէմուրն աղգեր կործանէ, բայց ձեր հարստութիւնը միշտ ապահովեալ է. թող աշխարհ իւր սիրողներն տրամեցնէ, դուք որ հանդերձեալ էք ճշմարիտ մարդ լինելու, պիտի խնդայք աշխարհի թըշուառութեանը վրայ, զի ճշմարիտ մարդու բաժին չէ աշխարհի տուած հարուածներն:

Վղիւ մանկունք, բարի գաստիւ արակաց ձեռք զձեզ Հայաստանի լեռներէն իբրեւ անուշահոտ ծաղկունք ժողովեց և բերելով Միօնի պարտիզին մէջը անկեց, զձեզ սուգանող ջուրն աշխարհի բարեբար Վրկչին շնորհարուղիս աղբիւրներն են, որոնք իւր անօրինական պաշտելի սուրբ տեղերէն կը բղխին և միանգամայն բռլոր տիեզերքը կը զովացնեն. դուք որ ձեր զգալի շրթունքներով միշտ կ'երկրապագէք այն սուրբ տեղերուն եւ այն աղբերակներու շուրջերը շարուած էք, որքան պիտի զօրանան և 'ի խոր ձգին ձեր արմատները, յոյս մեծ ունիմք որ 'ի ժամանակին ձեր պտուղները պիտի տայք: 'Կուք հարազատ Հայոց զաւակներ էք, Հայոց տգիտութեամբ գառնացած բերանները պիտի քաղցրացնէք. Հայաստանը, ձեր սիրելի հայրենիքը, յորմէ այժմ բաշակայ էք, ձեզ կըսպասէ. միտ բերէք նախնեաց յիշատակները, երբեմն ձեզ պէս մանկունք Վթէնքի մէջըն ուսան ու գաստիարակուեցան, որոնք բեղմնաւորեալ 'ի Հայաստան գառնալով, Հայոց համար ոսկեղէնիկ դար մը ծնան: 'Կուք ալ Միօնի սուրբ ծոցին մէջը ամփոփուած էք, Հայաստան մեծ յուսով կըսպասէ ձեր 'ի հայրենիքը վերադարձին, ժա-

մանակի բերմունքը Հայոց երկիրը կորդացուցեր է, բայց ձեր արօրը 'ի խոր պիտի թափանցէ, տգիտութեան փուշերը Հայոց արգաւանդ հողէն արմատախիլ պիտի ընէ. այն ատեն ձեր ունեցած սերմն պիտի ցանէք չէ թէ փուշերու մէջը, այլ յերկիր պարարտ, որոյ պտուղ հարիւրաւոր կը հնձուի:

Յիշեցէք, Հայոց մանկունք, աշխարհի սկիզբէն 'ի վեր մինչեւ ցարդ ամեն մարդն ալ ձեզ պէս մանուկ եղած է. աշխարհաչէն թագաւորները, պատկառելի նախարարաց խումբերը, եկեղեցաչէն սուրբ հարք և շատ մը հայրենասէր և աղգասէր մեծագործ անձինք և այլն, բոլորն ալ տղայութենէ բարձրանալով իրենց անուանց տիտղոսները ժառանգեր են իրենց գործքերուն համեմատ: 'Կուք ալ այժմէն սկսելով, ժամանակին պիտի գործէք ինչ որ ձեզ սահմանուած է, ինչ որ ձեր ձիրքերն ձեզ կ'առաջնորդեն:

Յոյսերնիս մեծ է ձեր բարի գաստիարակաց վրայ, որոնց ձեռքը ձեզ կ'առաջնորդեն. ձեզ համար առ այժմ ուրիշ բան մը չկայ, միայն խորին հընազանդութիւն առ գաստիարակս ձեր. ձեր այս թանկագին շրջանին մէջը անդուլ աշխատութիւն և եռանդուն ուսումնասիրութիւն: Արեմն, գործեցէք Հայոց սիրելի մանկունք. ձեզ համար գարուն է, մեղուի նման ծաղկունքները ժողովեցէք, սրտերու համար քաղցրաձաշակ մեղը՝ և մտաց լուսոյ համար՝ մաքուր մամ պատրաստեցէք, որ քաղցրանան տգիտութեամբ գառնացած խորհուրդները, որ լուսաւորութիւն նսեմացած սրախ տաճարները:

Մարտի 6 ձեր ներկայացուցած շքեղ հանդէսն զմեզ յուսագրեց, ձեր երեց եղբարց ճառախօսութիւնքն Միօնի դպրոցիդ յառաջագիմութեան քայլափան է. ձեր բարի գաս-

տիրաւորներն ձեր ուղին շտկած են ,
անխոտոր ձեզ կ'առաջնորդեն , մինչև
ձեր նպատակահետևանքն : Տե-
րունական ուխտաւորաց երեսաց վրայ
ժպիտներ կը փայլէին , երբ զձեզ յա-
ռաջագիմուժեան ասպարէզին մէջը
կը տեսնային :

Հնորհակալ եմք առ այս Ամե-
նապատիւ Աստուծոյ Արքայան Պատրի-
արք Զօրմէն , որ իւր պաշտօնին կռ-
չուած օրէն 'ի վեր փայտ ունեցեր է
դպրոցիս յառաջագիմուժեան և բա-
րեկարգութեան . շնորհակալ եմք
Ս . Աթուոյս Արժանապատիւ սուրբ
հայրերէն , որ 'նորին Արքայութեան
նեցողի եղած են առ այս իրենց ջանք-
քերնին ալ չը խնայելով . շնորհակալ
եմք յաւէտ վանուցս Արչութենէն
որ իրենց սիրելի դպրոցն օր աւուր ա-
ւելի զօրանալու համար , օրինաւոր
Տեսչութեան և դաստիարակաց յանձ-
նած են զայն , որոնք գիտեն ընկերակա-
նութեան համար դաստիարակեալ
սրտեր պատրաստել , գիտեն մտաց
ճրագներն վառել և գիտեն Հայրե-
նեաց համար նախնական զաւակներ
հասցունել :

Հայոց մանկունք , զձեզ տեսանք
իրրեւ առհաւատչեայ Հայոց յա-
ռաջագիմուժեան . կացէք դուք 'ի
սէշ հայրենեաց և մէք յուսով 'ի սէր
ձեր՝ սպասելով ձեր պողաբերութե-
'ի վերջոյ կը մտղթենք ձեր բարերար
դաստիարակաց համար ժրջան բա-
զուկներ , որք կարող են զձեզ սաշա-
պանել , և ձեզ համար ալ քաջնթաց
յառաջագիմութիւն :

Ի դիմաց տէրունական ուխտա-
ւորաց

Սեպրոյ Ա . Սոխեան
Սիւսեան Արքայ .

1872 . Ապրիլ 19
Ղարաբաղէմ :

ԿՍՐԳՍԳՐՈՒԹԻՒՆ

Ս . Ռ . Ո . Ղ . Զ . Ո . Ի . Թ . Ե . Ա . Ն

(Հարուժակութիւն : տես թիւ 31)

Չիք ինչ այնչափ առաւել օգտաւ
ւէտ շնչարգելութեան , որչափ չոր ,
մաքուր և բարեխառն օդ . քանզի
փակեալ օդ քաղաքի կամ բնակու-
թեան մնասակար է յոյժ : Այն որոյ
պարտ է հիւանդին հողալ զտեղի
բնակութեան , որոյ օդն իցէ բարե-
խառն : յատկապէս եթէ իցէ այն ծա-
վեղերեայ տեղի , ուր և կարէ յամե-
նայն առաւօտ լուանալ 'ի ջուր ծա-
վու , և երբեմն մի կամ երկու ամբ
լմպել 'ի ջրոյն :

Վեշ

Ի սոյն հիւանդութեան զանազան
բժշկիք առեալ են զփորձ պէտպէս
դեղորէից , այսինքն՝ եփուած քրանա-
բեր փայտից , ոգի արմատոց չըջանի
արեան , փոշի վտարիչ բաղամի , դեղ
հատ փսխման , խարանդեղ կամ օ-
ճանելի կրծոց , թանձր խահվէ , նը-
չոյք չոգորափ կաթամբ եփեալ , ծը-
խանելի տերեւ ինչ կլոպան , և այն
և այլն : Այլ յայոցանէ ամենից ոչ մին
և ոչ միւսն բաւական է տալ կատա-
րեալ առողջութիւն : Այլ միայն օգտաւէտ
բժշկութիւն այս հիւանդութեան է
որպէս գրեցաւ 'ի վերոյ , բնակիլն 'ի
չոր և 'ի բարեխառն տեղաւ կամ 'ի ծա-
վեղեր . հետեւել պատշաճ կերակրոց ,
'ի բաց կալ ամենեւին 'ի զօրաւ որ ըլ-
պելեաց . զդուշնալ 'ի սաստիկ հող-
մաց , յատկապէս 'ի թիկանց կուսն .
յամենայն առաւօտու և գէպ յե-
րեկոյեան , այսինքն 'ի մտանել արեւու